ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ԾՐՋԱԿԱ ԱԾԽԱՐՀԸ 2

ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ – ՏԵՍՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան-2024

ՀՏԴ
ԳՄԴ

«Ես և շրջակա աշխարհը 2» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար: Ուսումնական նյութերի հարմարեցումներ: Մանուկյան Մ. Ռ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.:, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն - Եր.: Էդիթ Պրինտ, 2024 - 32 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 29.02.2024 թվականի 284-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ մ.գ.թ., դոցենտ Սվաջյան Ա. Հ.

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.

Հեղինակներ՝
Մանուկյան Մ. Ռ., մանկավարժական գիտությունների թեկնածու
Պետրոսյան Ս. Ս.
Օհանյան Հ. Վ.

Համակարգչային ձևավորում՝ Խուդավերդյան Դ. Գ., Դավթյան Հ. Լ.
Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երկրորդ դասարանի «Ես և շրջակա աշխարհը 2» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
Տպաքանակը՝ 150 օրինակ ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 9

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 31

ՆԱԽԱԲԱՆ

«Ես և շրջակա աշխարհը 2» մեթոդական ուղեցույցն աջակցություն է առարկան դասավանդողների համար՝ կրթական դաշտում հասանելի, ներառական պայմանների ապահովմամբ և կրթական նոր իրողություններով առաջնորդվելու համար:

Մեթոդական ուղեցույցի հիմքում տասներկուամյա հանրակրթական ուսումնական հաստատության 2-րդ դասարանի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներն են:

«Ես և շրջակա աշխարհը 2» մեթոդական ուղեցույցը նպատակ ունի աջակցել ուսուցիչներին առավել մատչելի և արդյունավետ կազմակերպելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառությունը:

Մեթոդական ուղեցույցն ստեղծելիս կարևորել ենք կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների՝ ուսման շարժառիթի, կարողությունների և արժեքների ձևավորման հարցը՝ առաջնորդվելով բացառապես տարրական դասարանների ծրագրի ավարտին չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովման օրախնդիր պահանջով:

Ուղեցույցն ընդգրկում է բազմաբնույթ և բազմաշերտ առաջադրանքների համախումբ, որը կօգնի ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը:

Կատարելով տարաբնույթ առաջադրանքներ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողը ձեռք կբերի այնպիսի անձնային որակներ, որոնք նրան պետք կգան և՛ իր առօրյա գործունեությունը կազմակերպելիս, և՛ ամբողջ կյանքի համար, կօգնեն հնարավորինս արագ հարմարվել շրջակա միջավայրին:

Այս առաջադրանքները սովորողի առօրյայից են, բխում են նրա կենսափորձից՝ արդյունքում ապահովելով տարբեր կարողունակությունների ձևավորմանն ուղղված վերջնարդյունքները:

Ուսումնական նյութի մատչելի հաղորդման, կարճ գործողություններով, փոքր զարգացող քայլերով իրագործելուն միտված առաջադրանքները ***հարմարեցված*** ռեսուրսներ են՝ ուղղված ուսումնական դժվարություններ ունեցող սովորողի կրթական կարիքները բավարարելուն:

Կարճ, հեշտ կատարվող առաջադրանքներն օգնում են սովորողին անմիջականորեն ընդգրկվել ուսումնական գործընթացի մեջ:

Դասը պլանավորելիս ուսուցիչը մշտապես ունենում է լրացուցիչ ուսումնական նյութեր ստեղծելու կամ դրանք սովորողների ամենատարբեր կարիքներին հարմարեցնելու խնդիր: Նշենք, որ աշխատանքային գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքներն օգնություն են ուսուցչին այս հարցում, և նա կարող է դրանք կիրարկել՝ ըստ սովորողների կարիքների և ընդունակությունների: Մասնավորապես, առաջադրանքները՝

- սովորողներին նախապատրաստում են թեմայի յուրացմանը,
- խթանող, մոտիվացնող են,
- նպաստում են սոցիալականացմանը,
- հարստացնում են բառապաշարը և այլն:

Ուղեցույցում զետեղված յուրաքանչյուր առաջադրանք ունի **ուսումնական արժեք, տևողություն՝ ըստ սովորողի կարիքի, նախապատրաստման, կազմակերպման եղանակ կամ ձև և համապատասխանում է ուսումնական որոշակի մակարդակի կամ պատրաստվածության:**

Ինչպես ենթադրվում է, առաջադրանքների կատարման համար ժամկետներ չեն նախատեսվում (սովորողն ինքն է թելադրում իր աշխատաժամանակը, և այն կարող է խիստ տարբեր լինել), սակայն հարկավոր է պահպանել առաջադրանքների շարունակականությունը՝ սահմանված վերջնարդյունքներն ապահովելու համար:

Աշխատանքային գիրք-տետրի բովանդակային առանցքը «Ես»-ն է (ինքնաճանաչում, ինքնակազմակերպում, ինքնաընդունում և այլն), որի հենքի վրա պարուրաձև կառուցվում են մյուս թեմաները՝ «Ես և մարդիկ», «Ես և բնությունը», «Ես և տիեզերքը»:

Նշենք, որ ներառված առաջադրանքների ծանրակշիռ մասը վերաբերում է սովորողների ինքնաճանաչմանը և սոցիալական պարզագույն հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նրանց կենսակերպն ու առօրյան առողջ և անվտանգ կազմակերպելուն:

«Ես և շրջակա աշխարհը 2» աշխատանքային գիրք-տետրում առաջադրանքներին կից զետեղված են բազմաթիվ **թեմատիկ նկարներ**, որոնք առաջադրանքներն ավելի պատկերավոր և ակնառու են դարձնում սովորողի համար, ինչպես նաև նպաստում դրանք լուսաբանելու, ավելի զննական դարձնելու, տարբեր կողմերից ընկալելու, խոսքը, մտածողությունը, գեղագիտական ճաշակը զարգացնելու և, իհարկե, ունեն նաև դաստիարակչական ներգործություն:

Նկարների դիտման արդյունավետությունն ապահովելու համար կարող ենք փոքրիկ զրույց կազմակերպել, որի նպատակը սովորողների աշխատանքին որոշակի ուղղվածության հաղորդումը

և առաջադրված նկարը ճիշտ և բազմակողմանիորեն ըմբռնելու անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետք է լինի:

Աշակերտներին հարկ է սովորեցնել մանրամասնորեն դիտել նկարները. նրանք պետք է անվանեն այն առարկաները, որոնց հանդիպել են առօրյայում, ցույց տան դրանց միջոցով կատարվող գործողությունները, գիտակցեն այդ իրերի կիրառման անհրաժեշտությունը՝ (անձնական հիգիենայի պարագաներ, առողջ սնունդ և այլն) արդյունքում տիրապետելով բարեվարքության, սոցիալական պարզագույն կանոնների, որոնք նրանց կօգնեն հարմարվելու և ապրելու իրենց միջավայրում:

Աշխատանքային գիրք-տետրում կարևորել ենք նաև **շփման-հաղորդակցման** դերը՝ շեշտադրելով այն առանձնահատկությունները, որոնք ապահովում են կապակցված խոսքի զարգացում, բառապաշարի հարստացում, բառային աշխատանք, հարցերին պատասխանելու, լսելու, ըմբռնելու կարողության և հմտության ձևավորում (տե՛ս QR ծածկագրերը):

Կան նաև **ինտեգրված** առաջադրանքներ, որոնք միասնական մոտեցում են ապահովում ուսումնասիրվող առարկաների շրջանակում (մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա):

Այսպիսով, որպեսզի ուսուցիչը կարողանա արդյունավետ օգտագործել աշխատանքային գիրք-տետրը, հարկավոր է, որ նա քաջածանոթ լինի «Ես և շրջակա աշխարհը 2» առարկայական չափորոշչին և ծրագրին, մանրամասնորեն ուսումնասիրի ծրագրային պահանջները սահմանված վերջնարդյունքների համատեքստում, յուրաքանչյուր վերջնարդյունք դիտարկի դասագրքում ընդգրկված առաջադրանքների, դրանցից բխող նպատակների ու խնդիրների շրջանակում. ի՞նչ անցնել, ինչպիսի՞

կարողություններ և հմտություններ ձևավորել, ի՞նչ յուրացրեց սովորողը ոչ միայն առօրյայի, այլև կյանքի համար, ինչպիսի՞ վերաբերմունք և վարքագիծ ձևավորվեց նրա մոտ, ի՞նչ փոխվեց նրա աշխարհայացքում և այլն:

Կարևոր և անհրաժեշտ պայման է, որ ուսուցիչը դասարանում ապահովի բաց միջավայր, որտեղ բոլոր սովորողներն ազատ գործունեություն ծավալեն, չվախենան սխալվելուց, համագործակցեն, միմյանցից սովորեն ու սովորեցնեն իրար:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

ԱՀԱ ԵՎ ԵՍ

«Ահա և ես» ենթաթեման օգնում է սովորողին ճանաչել իր մարմինը, բացահայտել սեփական աշխարհը, իր հույզերը, զգացողությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները:

Ենթաթեման ընդգրկում է 54 առաջադրանք:

Սովորողի ուշադրությունը հրավիրում ենք գիրք-տետրի առաջին էջում զետեղված թեմատիկ նկարի վրա. դռան շեմից ներս են մտնում աղջիկն ու տղան: Առաջին պահին սովորողը կարող է խոսել նրանց մասին՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- Ո՞ւմ ես տեսնում նկարում:
- Ցույց տուր՝ ո՞րն է աղջիկ, ո՞րը՝ տղա:
- Ո՞ւր են եկել տղան և աղջիկը (դպրոց, դասարան):

1-3-րդ առաջադրանքները կատարելիս սովորողն ամբողջացնում է իր արտաքին տվյալների մասին ունեցած գիտելիքները, մասնավորապես՝ բաց թողած տեղերում լրացնում է իր անունը, տարիքը, մազերի և աչքերի գույնը, այսինքն՝ կարողանում է նկարագրել իրեն՝ օգտվելով տրված նկարներից և բառահումքից: Գրավոր խոսքի դժվարությունների դեպքում կարելի է միայն բանավոր հարցնել:

4-5-րդ առաջադրանքներում սովորողները կազմում են երկխոսություններ: Դա նախ՝ ապահովում է շփումն ու հաղորդակցումը, ապա՝ հնարավորություն է տալիս կրկնելու սովորածը:

Սկզբում երկխոսություն կարող են կազմել ցանկացած երկու սովորող՝ հնարավորություն տալով ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողին դիտարկել իրավիճակը, լսել երկխոսության մի քանի տարբերակ, այնուհետև ներառվել այդ գործընթացում՝ փորձելով ներկայացնել իրեն և լսել դիմացինին: Դժվարությունների դեպքում կարող ենք սովորեցնել հարցերը և դրանց պատասխանները, այնուհետև տարբեր իրավիճակներում ամրապնդել դրանք:

6-րդ առաջադրանք՝ «Ամբողջացրո՛ւ երեխաների դեմքերը: Ինչո՞վ են նման իրար, ինչո՞վ են տարբեր»:

Այս առաջադրանքում սովորողն իր գիտելիքը կիրառում է գործնականում՝ լրացնելով ***համր*** նկարները. նկարում է աչքեր, հոնքեր, քիթ, բերան: Ասում է՝ ինչ մազեր ունեն երեխաները (կարճ, երկար, հյուսեր, գանգուրներ և այլն): Դժվարության դեպքում կարելի է ամբողջացնել նկարները և հնարավորություն տալ նրանց բարձրաձայն նկարագրելու դրանք:

Սովորողը՝

- ասում է, թե որ նկարին է իրեն նմանեցնում,
- ցույց է տալիս՝ որ դեմքն է իրեն դուր գալիս,
- ցույց է տալիս՝ որ նկարն է դասարանի որևէ ընկերոջը նման,
- ասում է, թե ինչով են նման այդ նկարները, ինչով են տարբեր:

7-րդ առաջադրանք՝ «Ստեղծի՛ր քո «անձնագիրը»՝ լրացնելով բաց թողած բառերը»:

Այս առաջադրանքը կատարելու համար սովորողի հետ կարելի է պատրաստել փոքրիկ գրքույկ, որի վրա նա ամրացնում/սոսնձում է իր լուսանկարը: Գրքույկը կարելի է պատրաստել՝ 12 էջանոց տետրից կտրելով մի փոքրիկ մաս, որը կփոխարինի «անձնագրին»: Սովորողը նախ՝ բանավոր է կատարում առաջադրանքը. բարձրաձայնում է բաց թողած բառը տվյալ նախադասության մեջ, ապա՝ լրացնում:

7-րդ առաջադրանքը նպատակ ունի մեկտեղելու այն տեղեկույթը, որը սովորողը յուրացրել է նախորդ դասերին: Նա լրացնում է բաց թողած տողերը՝ մեկ անգամ ևս կրկնելով անձնական տվյալները:

Կարծում ենք՝ սեփական անձի մասին տվյալների իմացությունը սոցիալական շփման առաջին նախապայմանն է և շատ կարևոր տեղեկություն է երեխայի անվտանգության տեսանկ-յունից:

Եթե սովորողը դժվարանա գրելով լրացնել, ապա կարելի է թաղքագրչով գրել բառերը (անունը, տարիքը՝ 7), ցույց տալ, բարձրաձայն ասել, խնդրել, որ սովորողը կրկնի, օրինակ՝ Ես Աննան եմ, յոթ տարեկան եմ, և այլն: Այնուհետև, գրած բառերը սոսնձելով փակցնում է առաջադրանքի համապատասխան տեղերում:

8-րդ առաջադրանք՝ «Ուշադիր դիտի՛ր նկարները: Ասա՝ ո՛ր երեխան ի՛նչ է սիրում անել: Կարող ես երեխաներին անուններով կոչել»:

Օրինակ՝ Անին սիրում է գիրք կարդալ:

Կարևոր է սովորողի ուշադրությունը սկզբում կենտրոնացնել մեկ նկարի վրա: Առաջարկում ենք մնացած նկարները փակել սպիտակ թղթով:

Նախ՝ աշխատանքը կազմակերպվում է մեկ նկարի շուրջ՝ հետամուտ լինելով, որպեսզի սովորողն անպայմանորեն կատարի առաջադրանքի պահանջը՝ ասի, թե որ երեխան ինչ է անում, եթե հնարավոր է՝ ցույց տա համապատասխան գործողությունը:

Նույնը կրկնել հաջորդ նկարների շուրջ աշխատանքները կազմակերպելիս: Բանավոր խոսքի բացակայության դեպքում կարող եք նկարագրել գործողությունը և առաջարկել, որ սովորողը ցույց տա համապատասխան նկարը:

9-րդ առաջադրանք.

Գիրք-տետրի էջում պատկերված են ձեռքեր: Յուրաքանչյուր ձեռքի ափի մեջ սովորողը պետք է գրի, թե ինչ է սիրում անել:

Եթե սովորողը դժվարանա գրել, ապա կարող է ասել և ուսուցչի օգնությամբ գրառել:

Կարելի է կատարել նաև **գործնական աշխատանք**. սովորողը կարող է ձեռքերը դնել թղթի վրա, ուրվագծել, այնուհետև կտրել ուրվագծված պատկերները և ափերի մեջ գրել:

10-րդ առաջադրանք. «Ուշադիր դիտի՛ր նկարը».

- երեխաներին կոչի՛ր անուններով,
- քանի՞ երեխա է պատկերված նկարում,
- ո՞ր երեխան ինչո՞ վ է զբաղված:

Ուսուցիչը կարող է պատմել՝ ցույց տալով նկարում պատկերված դրվագները՝ անհրաժեշտության դեպքում շեշտադրելով այն, ինչը նա ուզում է ամրագրել սովորողի հիշողության մեջ:

Խորհուրդ ենք տալիս ամբողջական նկարները տրոհել առանձին նկարների և ուսման մեջ դժվարություն ունեցող սովորողի ուշադրությունը հրավիրել դրանցից յուրաքանչյուրի վրա: Խոսքը կառուցել՝ օգտագործելով հիմնականում պարզ համառոտ կամ պարզ ընդարձակ նախադասություններ, օրինակ՝ Արևը շողում է: Թռչունները թռչում են: Երեխաները խաղում են բադմինթոն /փետրագնդակ/: Արան անվագլոր է քշում:

11-15-րդ և 17-րդ առաջադրանքների նպատակն է սովորեցնել, որ մարդիկ միմյանց հետ շփվում են ոչ միայն բառերի միջոցով, այլև՝ դիմախաղով, դեմքի որոշակի արտահայտությամբ:

Առաջադրանքը հնարավորություն է տալիս ճանաչել այդ հույզերը, զգացողությունները, ծանոթանալ դրանց արտահայտ-չաձևերին՝ դիտարկելով նկարում պատկերված երեխաների դեմքերը (առաջադրանք 11):

Հաջորդիվ, սովորողը **համր** նկարները լրացնում է համապա-տասխան հույզերով՝ օգտվելով կից գրառումներից: Եթե սովորողը դժվարանում է, ապա կարելի է նորից վերադառնալ առաջադրանք 11-ին, կրկին դիտել նկարները՝ հիշեցնելով, թե որ նկարը որ հույզն է արտահայտում, ապա օգնել նրան կրկնօրինակելով լրացնել: Դժվարության դեպքում կարելի է հուշումներ տրամադրել և ֆիզիկապես ուղղորդել՝ ամբողջականացնելու նկարները:

16-րդ առաջադրանքում ուսման մեջ դժվարություն ունեցող սովորողը պետք է կազմի հույզերին վերաբերող 1-2 պարզ համառոտ կամ պարզ ընդարձակ նախադասություն:

Այս առաջադրանքը նպատակ ունի նաև սովորեցնել, որ դրական հույզ կամ զգացողություն առաջանում է, երբ մարդը լավ արարք է կատարում, և հակառակը:

Կարևոր է, որ սովորողին օգնենք գնահատել երեխաների արարքները՝ ըստ նկարների՝ հավելվածից ընտրելով համապատասխան խորհրդանիշը և փակցնելով կից տրված քառակուսու մեջ:

18-րդ առաջադրանքում ներկայացված են դրվագներ իրենց քաջ ծանոթ «Երեք խոզուկներ» հեքիաթից:

Նախ կարելի է լսել հեքիաթը՝ օգտվելով ծածկագրից, որպեսզի սովորողին հիշեցնենք հեքիաթի բովանդակությունը, ապա՝ կատարել առաջադրանքը՝ նկարներին կից փակցրած քառակուսիներում նկարելով համապատասխան հույզերն արտահայտող խորհրդանիշները:

19-րդ առաջադրանքում անդրադառնում ենք այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են՝ **երեկ (անցյալ), ներկա (այսօր):**

Հարկավոր է խնդրել ծնողից բերել սովորողի տարբեր տարիքի երկու լուսանկար: Ցանկալի է, որ լուսանկարներից մեկը լինի մինչև մեկ տարեկան, որպեսզի տարիքային տարբերությունն ավելի ակնառու լինի՝ հնարավորություն տալով սովորողին դիտարկելու **անցյալ (երեկ), ներկա (այսօր)** հասկացությունները:

Սովորողը աշխատանքային գիրք-տետրի համապատասխան ուղղանկյուններում փակցնում է լուսանկարները: Ցանկալի է, որ նա ներկայացնի իր նկարները՝ օգտագործելով վերոնշյալ հասկացությունները, օրինակ՝ «Այս նկարում ես փոքր եմ, շատ ժամանակ է

անցել, դա արդեն անցյալում է: Ներկա պահին ես արդեն մեծացել եմ: Այսօր յոթ տարեկան եմ»:

Առաջարկել, որ սովորողը ավարտի տրված նախադասությունները՝ «Ես երեկ գնացել էի ... : Ես այսօր սովորում եմ ...»:

20-րդ առաջադրանքում սովորողն իմանում է, որ բույսերը ևս, ինչպես մարդիկ, մեծանում են **(**աճում են**)**: Դիտում է նկարները և համեմատում:

«Իմ օրվա ռեժիմը» ենթավերնագիրը նպատակ ունի ներկայացնել պլանավորված, ծրագրված օրվա ռեժիմ՝ որտեղ արդյունավետորեն զուգակցվում են ուսումը, խաղը, հանգիստը, քունը և այլն:

21-րդ առաջադրանքում սովորողը ծանոթանում է օրվա տարբեր պահերին, որոշում է, թե որ նկարներում են պատկերված **ցերեկը, երեկոն, առավոտը և գիշերը:**

Կարելի է նաև հարցեր տալ, օրինակ՝ ինչի՞ց իմացար, որ առավոտ է, կամ՝ ի՞նչ ես անում ցերեկը, ի՞նչն է քեզ հուշում, որ ցերեկ է, ի՞նչ է երեկոն, ի՞նչ է անում ձեր ընտանիքը երեկոյան, ինչո՞վ եք զբաղվում, օրվա ո՞ր պահն ես սիրում և այլն: Բանավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է նկարագրել և առաջարկել երեխային ցույց տալ համապատասխան նկարը:

22-րդ առաջադրանքում հնարավորություն է տրվում իմանալու նաև, թե մարդիկ օրվա որ պահին ինչպես են իրար ողջունում:

Խորհուրդ է տրվում ***նմանակող խաղի***[1] օգնությամբ բեմականացնել այս իրավիճակները՝ հնարավորություն տալով ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողին նախ դիտել, ապա կրկնել, հետո դառնալ խաղարկվող իրավիճակների ակտիվ մասնակիցը:

Այնուհետև սովորողը **Հավելվածից** բերում է համապատասխան արտահայտությունը և փակցնում ճիշտ տեղում:

Գրավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է առաջադրանքը կատարել բանավոր կամ կիրառել հուշումներ:

23-24-րդ առաջադրանքներն ունեն գիտելիքների ամրապնդման նպատակ. մի դեպքում հավելվածից բերում է համապատասխան նկարը և փակցնում ճիշտ տեղում, մյուս դեպքում՝ առանց բառերի ցույց է տալիս, թե ինչպես են բարևում և հրաժեշտ տալիս: Ընթերցանության դժվարության դեպքում կարելի է կարդալ բառերը և կիրառել հուշումներ:

25-րդ առաջադրանքում նախքան հանելուկը կարդալը կարելի է սովորողի ուշադրությունը հրավիրել ժամացույցի նկարին և հարց ուղղել նրան. «Դու այս սենյակում տեսնո՞ւմ ես դրանից»**:** **«**Դրանից դուք տանն ունե՞ք, որտե՞ղ է դրված/փակցրած: Ինչի՞ համար են այն օգտագործում»: Հետո կարելի է կարդալ հանելուկը՝ ցույց տալով նաև ժամացույցի մոդելը, երբ սլաքները կանգնած են և հետո սկսում են շարժվել:

[1] **Նմանակող խաղ՝** օգնում է մոդելավորել իրականում տեղի ունեցող առավել կոնկրետ իրավիճակներն ու դրանց զարգացման պայմանները:

26-րդ առաջադրանքում սովորողն իր գործողությունները համադրում է ինչպես օրվա պահերի, այնպես էլ՝ ժամացույցի հետ: Նշենք, որ ժամացույցին ծանոթանում են նաև «Մաթեմատիկա» առարկայից, և այստեղ ոչ միայն ամրապնդվում է սովորողի գիտելիքը, այլև ապահովվում է միջառարկայական կապ: Այս առաջադրանքը սովորողին օգնում է նաև պատկերացում ունենալ օրվա ռեժիմի մասին. կարելի է սկսել զրույցից. ի՞նչ է անում աղջիկը, օրվա ո՞ր պահն է, ժամը քանի՞սն են ցույց տալիս սլաքները: Առաջարկում ենք սովորողին ցույց տալ նաև նկարների գործողությունները. **արթնանում է, գնում է, խաղում է, քնում է:**

27-րդ առաջադրանքում արդեն հարկավոր է լիաժեք ներկայացնել օրվա պլանավորումը, խոսել **օրվա ռեժիմի** մասին՝ նշելով, որ օրվա ռեժիմ ասելով հասկանում ենք այն օրը, որը պլանավորել ենք, երբ գործողությունները տրամաբանորեն ճիշտ հերթագայություն ունեն, երբ օրվա ընթացքում ժամային բաշխման ճիշտ համամասնություն կա ուսման և խաղի, հանգստի և քնի և այլ զբաղմունքների միջև: Այս ամենը սովորողը նախ դիտարկում է Անիի առօրյայի շրջանակում: Որպես ընդհանրացում՝ առաջարկել նրան պատմել իր առօրյայի մասին:

28-րդ առաջադրանքում սովորողը վերհիշում է շաբաթվա օրերը՝ դրանք կապելով ***երեկ, այսօր*** հասկացությունների հետ: Հնարավոր է՝ անհրաժեշտություն լինի հերթով սովորեցնել և հաճախակի կրկնել տալ շաբաթվա օրերի անունները և ավելի շատ ժամանակ հատկացնել նյութը յուրացնելու համար:

29-րդ առաջադրանքում սովորողը պետք է ուղղանկյուններում հերթականությամբ տեղադրի շաբաթվա օրերի անվանումները և դրանք ճիշտ համարակալի:

Գրավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է կարդալ բարձրաձայն և ուղղորդել սովորողին, որպեսզի կարողանա գրածը կապել բառի հետ:

30-րդ առաջադրանքում սովորողը պետք է նշի շաբաթվա օրերի քանակը և ընտրի համապատասխան վանդակը: Որպես հուշում՝ կարելի է միասին հաշվել շաբաթվա օրերը, որոնք նշված են վերևում, և հետո միայն նշել վանդակը:

Գրավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է կարդալ բարձրաձայն և ուղղորդել սովորողին, որպեսզի նա կարողանա գրածը կապել բառի հետ:

31-րդ առաջադրանքում սովորողը շաբաթվա օրերից առանձնացնում է ոչ աշխատանքային/հանգստյան օրերը՝ (շաբաթ, կիրակի) կա՛մ բարձրաձայնելով դրանց անունները, կա՛մ գրելով համապատասխան տողերի վրա:

Նույն առաջադրանքի **բ** կետում նա նշումներ է կատարում այն նկարների կողքին, որոնցում պատկերված վայրերում լինում է հանգստյան օրերին:

32-րդ առաջադրանքից հետո առաջարկում ենք խաղալ դիդակտիկ խաղ՝ «Խառնաշփոթ»:

Ողղանկյունաձև ստվարաթղթե քարտերի վրա գրել ***նախաճաշ, դպրոց, քուն, վերկաց, մարզանք*** բառերը:

Խնդրել սովորողին դրանք դասավորել ճիշտ հերթականությամբ:

Կարելի է նաև քարտերը համարակալել՝ ապահովելով միջառարկայական կապ՝ հնարավորություն տալով վերհիշել թվերը:

Թվերը կուղղորդեն և կհուշեն սովորողին դասավորել դրանք ճիշտ հերթականությամբ՝ հընթացս ամրապնդելով օրվա ռեժիմի քայլաշարը.

1. վերկաց
2. մարզանք
3. նախաճաշ
4. դպրոց
5. քուն:

32-34-րդ առաջադրանքները միտված են նույն վերջնարդյունքի ապահովմանը (**2Շ.Ե.Ի.Ն5** կազմել օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի, քնի միջև): Դժվարությունների դեպքում կարելի է կատարել ուղղորդումներ և տրամադրել հուշումներ:

35-րդ առաջադրանքում օգտվելով տրված օրացույցից՝ սովորողը պատասխանում է հարցերին: Մասնավորապես՝ դեղին շրջանակի մեջ է վերցնում հանգստյան օրերը, ասում է՝ ինչ գույնով են նշված աշխատանքային օրերը, հաջորդիվ՝ տրված գույների շարքից ընտրում է **սևը՝** կրկնելով նաև գույների վերաբերյալ իր ունեցած գիտելիքը:

Երեխան օրացույցում նշում է իր ծննդյան օրն իր նախընտրած գույնով: Կարելի է խնդրել, որ նա մի քանի անգամ բարձրաձայն կրկնի «***Իմ ծննդյան օրը ..... է***» նախադասությունը և օրացույցում ցույց տա այդ օրը: Կարելի է նաև ձեռքի տակ ունենալ օրացույց,

որտեղ ամիսներն ու թվերը ավելի մեծ չափերով և տեսանելի են (տեսողական խնդիրներ ունեցող երեխաների համար):

36-րդ առաջադրանքում սովորողը հավելվածից բերում է նկարներ իր սիրած զբաղմունքների վերաբերյալ և փակցնում տրված ուղղանկյուններում: Ցանկալի է, որ այս գործողությունները զուգակցվեն խոսքով, օրինակ՝ «Ես սիրում եմ խաղալ լեգոներով» (տեխնիկական հանգույցներից կառուցել նոր համադրություններ): «Հետաքրքիր է, երբ ես իմ ընկերոջ (եղբոր կամ քրոջ) հետ խաղում եմ լեգոներով» և այլն:

37-րդ առաջադրանքում սովորողը կարող է ասել կամ գրել, թե տրված նկարները աշխատանքայի՞ն, թե՞ հանգստյան օրերին են վերաբերում, պատմի իր անցկացրած հանգստյան օրվա մասին կամ պատասխանի դրանց վերաբերող հարցերին:

ԻՄ ՄԱՐՄԻՆԸ

Այս ենթաթեման ապահովում է առարկայական ծրագրով սահմանված հետևյալ վերջնարդյունքը. «**2Շ.Ե.Ի.Մ2** բացատրել, որ մարմինն աշխատող համակարգ է, և բոլոր մասերը գործում են փոխկապակցված»:

38-րդ առաջադրանքում սովորողը նախ հնարավորություն է ունենում ծածկագրի միջոցով լսել փոքրիկ ոտանավոր մարմնի մասերի վերաբերյալ: Հարկ է նշել, որ ցանկալի է՝ ձայնագրված նյութերը լսեն դասարանի բոլոր սովորողները՝ ներառական միջավայր և համագործակցություն ապահովելու համար:

38-րդ առաջադրանքի «բ» կետում արդեն սովորողն իր ունեցած գիտելիքը կարող է օգտագործել՝ ամբողջացնելով ուրվանկարները և անվանելով ստացված պատկերները:

39-41-րդ առաջադրանքները ևս նպաստում են սեփական մարմինը, դրա կարևորագույն մասերը ճանաչելուն (գլուխ, պարանոց, իրան, վերջույթներ): Մի դեպքում սովորողը **Հավելվածից** բերում և փակցնում է համապատասխան նկարները, մյուս դեպքում լրացնում է բաց թողած բառերը կամ առաջադրանքները կատարում է բանավոր:

Կարևոր հանգամանք: Պետք է հասնել նրան, որ սովորողն ընկալի, որ իր մարմնի բոլոր մասերը գործում են փոխադարձաբար համաձայնեցված:

Այս ենթաթեմայում առաջարկում ենք նաև «Դիմակ» խաղը:

Սովորողը աչքերը փակ շոշափում է դիմակը և կռահում, թե ինչ է տվյալ պահին իր ձեռքի տակ (քիթ, աչքեր, բերան, ականջներ):

Խաղը սովորողին նախապատրաստում է «Իմ զգայարանները» թեմային, այս դեպքում՝ ակտիվացնելով շոշափելիքի զգայարանը:

ԻՄ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ

42-45-րդ առաջադրանքները նպաստում են զգայարանների օգնությամբ շրջակա աշխարհը ճանաչելուն:

Կարելի է նաև գործնական աշխատանքներ կազմակերպել, որոնց ընթացքում ուսման մեջ դժվարություն ունեցող սովորողին հնարավորություն կտրվի անմիջականորեն **շոշափելու, հոտոտելու, համտեսելու, լսելու, տեսնելու** որևէ առարկա՝

ակտիվացնելով զգայարանները: Դժվարությունների դեպքում կարելի է ուղղորդել կամ տրամադրել հուշումներ:

ՀԻԳԻԵՆԱ

46-50-րդ առաջադրանքները նպաստում են, որ սովորողը պահպանի հիգիենայի կանոնները՝ հաճախակի լվացվի, մաքուր կենցաղ վարի, տարբերակի անձնական հիգիենայի պարագաները, ունենա անձնական հիգիենայի անհատական պարագաներ, բացատրի դրանց կիրառման ձևերն ու անհրաժեշտությունը, ցուցադրի ձեռքերը և ատամները ճիշտ լվանալու շարժումները, պահպանի անձնական հիգիենան, մարմնի խնամքը՝ տեսողություն, լսողություն, կեցվածք, բերանի խոռոչ, մաշկ, մազեր, եղունգներ և այլն:

51-52-րդ առաջադրանքներում նկարը կրկնվում է (տե՛ս 10-րդ առաջադրանքը): Այս մոտեցումն արդարացված է, քանի որ հնարավորություն է տալիս նախ վերհիշելու այդ նկարի բովանդակությունը (խաղ, զբաղմունք, հետաքրքրություն, նախասիրություն, օրվա պահեր, հույզեր, զգացողություններ), ապա՝ մաքուր օդում լինելը դիտարկելու որպես առողջությունն ամրապնդող կարևոր գործոն:

53-54-րդ առաջադրանքները դիտարկելիս սովորողը ծանոթանում է որոշ սպորտաձևերի, մարզանքների, սովորում կարևորել ֆիզիկական ակտիվությունը և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունն ամրապնդող կարևոր գործոններ:

Կարելի է սովորողին խնդրել կրկնել այն շարժումները, որոնք նա ցանկանում է կատարել՝ դրանք դարձնելով ինչպես իր ռեժիմի, այնպես էլ դասերի ժամանակ կիրառվող մարզումների կամ

վարժանքների անբաժանելի մաս: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել բանավոր և ֆիզիկական հուշումներ:

55-56-րդ առաջադրանքներում սովորողը ծանոթանում է մրգերին և բանջարեղենին, անվանում դրանք, դասակարգում՝ կից շրջանների մեջ համապատասխան գույնով նշելով՝ մի՞րգ է, թե՞ բանջարեղեն:

57-րդ առաջադրանքը հնարավորություն է տալիս նաև բացահայտելու սովորողի նախասիրությունները մրգերի և բանջարեղենի նկատմամբ՝ նրան առաջադրելով՝ «ի՞նչն ես սիրում» և «ի՞նչը չես սիրում» հարցերը:

Որպեսզի պատասխանելու հարցում սովորողը հնարավորինս արագ կողմնորոշվի, հարկավոր է նրան հուշել, որ կարող է օգտվել նախորդ առաջադրանքի նկարներից: Կարելի է նաև առաջադրանքը կատարել բանավոր:

58-59-րդ առաջադրանքները նպատակ ունեն ամրապնդելու ձեռք բերած գիտելիքները մրգերի և բանջարեղենի վերաբերյալ: Դժվարության դեպքում կարելի է հուշումներ տրամադրել՝ աստիճանաբար նվազեցնելով աջակցությունը:

60-րդ առաջադրանքում սովորողը հանդիպում է ***նախաճաշ*** բառին: Հարկավոր է նրան հիշեցնել, թե ինչ է ***նախաճաշը,*** օրվա որ պահի հետ է համընկնում **սննդի ընդունումն առավոտյան,** ինչու է հաճելի բնության գրկում նախաճաշելը:

Այս առաջադրանքը հնարավորություն է տալիս սովորողին նաև վերհիշելու նախկինում ձեռք բերած գիտելիքները (հաշվում է

երեխաների քանակը, դիտարկում օրվա պահերը, նկարագրում նրանց հույզերը՝ ուրախ, տխուր):

61-րդ առաջադրանքում արդեն շեշտադրվում է առողջ սնվելու գաղափարը: Սովորողը պարզում է, որ սննդի մեջ հարկավոր է կարևորել միրգն ու բանջարեղենը, քանի որ դրանք իրեն օգնում են առողջ մեծանալ, և համապատասխան վերաբերմունքն արտահայտում է խորհրդանիշների միջոցով:

62-70-րդ առաջադրանքներում սովորողն, օգտվելով նկարներից, կարողանում է տարբերակել **բուսական և կենդանական** սննդամթերքը:

Վերոնշյալ առաջադրանքների նպատակն է սովորողին բացատրել բազմազան սնունդ (բուսական և կենդանական) ընդունելու կարևորությունը, քանի որ դրանք էներգիայի աղբյուր են, նպաստում են օրգանիզմի արագ աճին և ամրացնում են ոսկորները: Դժվարությունների դեպքում կարելի է տրամադրել բանավոր և ֆիզիկական հուշումներ՝ աստիճանաբար նվազեցնելով աջակցությունը:

67-րդ առաջադրանքում սովորողը նախ՝ պետք է անվանի, թե ինչ մթերքներ կան սառնարանում, ապա՝ ասի, թե որ մթերքը որ թվին է համապատասխանում: Օրինակ՝ ձուկ -1:

71-րդ առաջադրանքում ջուրը կարևորվում է նախ՝ որպես անձնական հիգիենան հոգալու, մարմինը կոփելու անփոխարինելի միջոց, ապա՝ ջրի/հեղուկի ընդունումը՝ որպես օրգանիզմի կարևոր պահանջ:

Կարևոր հանգամանք: Կարելի է նրա առօրյայում ներմուծել ջուր խմելու սովորությունը՝ առաջարկելով իր հետ մշտապես ունենալ ջրի շիշ:

72-78-րդ առաջադրանքներում սովորողն, օգտվելով նկարներից, սովորում է անվտանգության մի քանի կանոններ՝ ինչպե՞ս շրջանցել վտանգները, խուսափել վտանգավոր իրերից ու իրավիճակներից:

Առաջադրանքները հիմնականում խարսխված են նկարային դրվագաշարի վրա, ուստի խորհուրդ է տրվում շատ մատչելի բառահումքով նախ բացատրել յուրաքանչյուր իրավիճակ՝ համոզված լինելով, որ այն սովորողն արդեն յուրացրել է, հետո անցնել այլ իրավիճակային նկարների լուսաբանմանը: Օրինակ՝ **74-րդ առաջադրանքի** իրականացման ընթացքում հարկ է բացատրել, որ կենդանիներին հարկավոր է սիրել, կերակրել:

2-րդ նկարում աղջիկը բաց է թողել ջրի ծորակը: Անուշադրությունը վտանգավոր է նախ իր կյանքի համար, հետո՝ կարելի է խոսել նաև **խնայողության** մասին:

Կարելի է սովորողի հետ մի քանի անգամ կատարել ծորակը բացելու, լվացվելու կամ ջրի շիշը լցնելու, ջուր խմելու, այնուհետև՝ ծորակն անմիջապես փակելու գործողությունները՝ հնարավորություն տալով սովորողին տիրապետելու սոցիալական պարզագույն կանոններին:

Կախված երեխաների անհատական առանձնահատկություններից՝ խորհուրդ ենք տալիս կիրառել դերային խաղեր կամ ինտերակտիվ զրույցներ:

75-րդ առաջադրանքի նպատակն է սովորողին տեղեկացնել այն անախորժությունների մասին, որոնք տեղի են ունենում մարդկանց անզգուշության պատճառով (հրդեհ, վթար, պայթյուն, վնասվածքներ և այլն), ինչպես նաև սովորեցնել նրան նման իրավիճակներին արագ արձագանքելու ձևերը:

Կարելի է բջջային հեռախոսի մոդելի վրա սովորողին ցույց տալ համապատասխան հեռախոսահամարները և խնդրել դրանք մի քանի անգամ հավաքել՝ հընթացս կրկնելով՝ ո՛ր հեռախոսահամարը ո՛ր վտանգավոր իրավիճակի դեպքում պետք է արագ հավաքել:

Հաջորդիվ, խաղարկելով այդ իրավիճակը, ուսուցիչն ասում է բառը, օրինակ՝ **հրդեհ,** սովորողը հավաքում է համապատասխան հեռախոսահամարը կամ ձեռքի տակ ունեցած թվանշանները դասավորում է ճիշտ հերթականությամբ՝ **1 01:**

79-րդ առաջադրանքի նպատակն է երեխաներին սովորեցնել բնական աղետներից պաշտպանվելու կանոնները:

80-86-րդ առաջադրանքներում դրվագային նկարաշարերի միջոցով ներկայացված են առօրեական **վնասակար** և **օգտակար** սովորությունները, որոնք սովորողին կօգնեն հասկանալու, որ իր առողջությունն ու անվտանգությունը պայմանավորված են նաև վնասակարը բացառելու և դրականը որդեգրելու մոտեցումներով: Անհրաժեշտության դեպքում կարելի է մանրամասն նկարագրել պատկերները և տալ հուշումներ:

87-98-րդ առաջադրանքները վերաբերում են «Ես և մարդիկ» թեմային: Նպատակն է հստակեցնել **տուն, ընտանիք,**

գերդաստան գաղափարների վերաբերյալ պատկերացումները, ձևավորել դերերի գիտակցման, սեփական դերին համապատասխան գործողությունների, ընտանեկան տոների, հանգստի, ժամանցի կազմակերպման, ինչպես նաև՝ ազգական-ների/հարազատների հետ շփման և հոգատար վերաբերմունք դրսևորելու հմտություններ:

Առաջադրանքները սովորողին կօգնեն հասկանալու, որ ընտանիքը միասին ապրող, միմյանց հարազատ մարդկանց խումբ է: Ընտանիքի անդամներին միավորում են սերը և հարգանքը միմյանց նկատմամբ, փոխադարձ հոգատարությունը և օգնությունը, ընտանեկան ավանդույթները, որոշ ընտանիքներում՝ հարազատների մի քանի սերնդի կեցության համատեղ կազմակերպումը և այլն:

Գրավոր խոսքի դժվարության դեպքում կարելի է առաջարկել սովորողին նկարել կամ բանավոր պատասխանել: Առանձին դեպքերում կարելի է գրառել սովորողի բանավոր խոսքը և առաջարկել արտագրել համապատասխան տեղում:

Կարևոր հանգամանք: Խորհուրդ է տրվում ընտանիքի կազմին վերաբերող թեմաներին մոտենալ զգուշությամբ՝ նկատի ունենալով, որ ոչ բոլոր երեխաներն ունեն ամբողջական ընտանեկան կազմ /հայրիկ, մայրիկ/: Կարելի է նախապես ունենալ համապատասխան տեղեկություն, հետո ձեռնամուխ լինել ընտանիքի անդամներին վերաբերող հարցերին պատասխանելու և նրանց մասին խոսելու առաջադրանքների կատարմանը:

99-102-րդ առաջադրանքները նպատակ ունեն սովորողի ուշադրությունը նախ հրավիրել **99-րդ** առաջադրանքի նկարներին, որպեսզի օգնենք հասկանալու, թե ո՛ր նկարում է պատկերված

քաղաք, իսկ որում՝ ***գյուղ:*** Նշել՝ ո՛ր ընտանիքը կարող է ապրել գյուղում, որը՝ քաղաքում:

Այնուհետև կարելի է հարցը տեղափոխել իր դաշտ՝ հարցնելով, թե որտեղ է ապրում ինքը /իրենց ընտանիքը/՝ գյուղո՞ւմ, թե՞ քաղաքում (տե՛ս 99-րդ առաջադրանքը):

100-րդ առաջադրանքում խոսքը վերաբերում է կոնկրետ այն բնակավայրին, որտեղ ինքն է ապրում. ինչպե՞ս է կոչվում քո բնակավայրը, ի՞նչ կա քո բնակավայրում (խանութ, դեղատուն, այգի, ոստիկանություն, դպրոց, հիվանդանոց և այլն):

Այդ կառույցների մասին տեղեկատվություն ունենալու հարցում օգնում են **101-102-րդ առաջադրանքները:** Մի դեպքում սովորողը հավելվածից բերում է բառը և փակցնում համապատասխան կառույցի նկարի տակ՝ որպես ցուցանակ, մյուս դեպքում նշում է, թե ինչ կառույցներ կան իր բնակավայրում:

Խորհուրդ է տրվում այս աշխատանքը կատարելուց հետո հնարավորություն տալ սովորողին մի քանի անգամ կարդալու բառը և օգնել նրան հասկանալու տվյալ կառույցի նշանակությունն ու դերն իր կյանքում: Օրինակ՝ **դեղատուն** բառը փակցնելուց հետո նրա ուշադրությունը հրավիրել դեղատան նշանի վրա՝ հարցնելով, թե որտեղ է տեսել այդ նշանը, ինչ գույն ունի այն սովորաբար, ինչու են մարդիկ գնում դեղատուն, երբ են դեղահաբ ընդունում, կարելի՞ է, արդյոք, առանց մայրիկի իմացության որևէ դեղ խմել և այլն:

Դժվարությունների դեպքում կարելի է ուղղորդել և խթանել գլոբալ ընթերցանության զարգացումը:

104-106-րդ առաջադրանքները վերաբերում են ընկերությանը՝ մատնանշելով՝ ի՞նչն է լավ, ի՞նչն է վատ:

105-րդ առաջադրանքը նախատեսվում է իրականացնել գործնական աշխատանքի միջոցով. սովորողը ուրվագծելով ստանում է երիցուկի պատկերը: Կենտրոնում գրում է իր ընկերոջ անունը, իսկ երիցուկի թերթիկների վրա՝ բնութագրող բառերը, որոնք բերում է հավելվածից: Սովորողը նախ՝ կարդում է բառերը, ապա՝ դրանցից ընտրում իր ընկերոջը բնութագրող բառերը և փակցնում թերթիկների վրա:

Ցանկալի է, որ սովորողը ծաղկաթերթերի մեջ ինքնուրույն գրի 1-2 բառ: Դժվարությունների դեպքում կարելի է կիրառել հուշումներ կամ կազմակերպել զույգերով աշխատանք:

107-112-րդ առաջադրանքները «Ես և մարդիկ» թեմայի շրջանակում են: Նպատակն է սովորողին օգնել տարբերակելու և բնութագրելու **կենդանի** և **անկենդան** բնության օբյեկտները, դրանց փոխադարձ կապերը: Դիտել նկարները և ընկալել դրանց փոխազդեցությունները (**տե՛ս 112-րդ առաջադրանքը**):

Երեխային կարելի է առաջադրել հետևյալ հարցերը.

- Ո՞ր առարկաներն են ստեղծվել բնության կողմից (արև, հող, աստղ, ծով և այլն):
- Ո՞ր առարկաներն է ստեղծել մարդը (շենք, ինքնաթիռ, հեռախոս, գիրք և այլն):
- Կարո՞ղ է երկրի վրա կյանք լինել առանց արևի լույսի, ջերմության:
- Կարո՞ղ են մարդիկ, կենդանիներն ապրել առանց ջրի:

Բերել հետևյալ օրինակները՝

Մարդ-ջուր փոխազդեցությունը: Այս կապը հնարավորություն է ստեղծում վերհիշել նաև անցած նյութը, այն է՝ հոգալ անձնական

հիգիենան, առողջ ապրելակերպ վարել (լողալ, կոփվել, օրական ջրի պահանջը բավարարել և այլն):

Բույս-արև (ջերմություն) կապը կարելի է դիտարկել դասարանում թաղարի մեջ որևէ բույս աճեցնելու միջոցով: Սովորողը կարող է խնամել այդ բույսը՝ ճիշտ ընտրելով դրա տեղը սենյակում/դասարանում: Նա կջրի բույսը, կմաքրի ավելորդ չորացած մասերից/տերևներից և անմիջականորեն կդիտարկի դրա աճը:

113-րդ առաջադրանքի շրջանակում աշխատանքը կազմակերպելիս հարկավոր է նախ այդ օրվա ուսումնական նյութը կապել նախկինում ձեռք բերած գիտելիքի հետ՝ անդրադարձ կատարելով այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են՝ **առավոտ, կեսօր, գիշեր** (տե՛ս 20-21-րդ էջերը): Խորհուրդ է տրվում սովորողի ուշադրությունը հրավիրել այն նկարների վրա, որոնցում տեսնում է արև (ցերեկ), լուսին, աստղեր (գիշեր): Խոսել այդ երկնային մարմինների մասին. օրինակ՝ «Արևը մեզ ջերմություն է տալիս: Լուսինը լուսավորում է երկինքը: Աստղերը մեզնից այնքան հեռու են, որ երևում են որպես լույսի փոքր կետեր»:

Կարելի է խոսել նաև 109-րդ էջի **112-րդ** առաջադրանքի նկարի շուրջ, որտեղ ցույց ենք տվել **կենդանի** և **անկենդան** բնության կապը (տե՛ս **արևի** և **ծառի** նկարը)՝ մեկ անգամ ևս հիշեցնելով, որ **առանց արևի ջերմության բույսը չի կարող աճել:**

Նախնական զրույցից հետո սովորողը կարող է լսել ձայնագրությունը (տե՛ս QR ծածկագիրը): Կարելի է առաջարկել նաև պատկերել երկնային մարմինները՝ օգտվելով դասագրքի համապատասխան էջերի նկարներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Ա. Ադամյան, Հ. Վ. Օհանյան (2022) Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 142 էջ:
2. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Վ. Օհանյան (2023) Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 148 էջ:
3. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչ (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 28-Ն հրաման):
4. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-րդ դասարանի առարկայական ծրագիր (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 50-Ն հրաման):
5. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 2-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Գ. Հովհաննիսյան և ուրիշներ), «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան-2023:
6. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 2-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Ն. Պողոսյան, Կ. Մարգարյան), Երևան-2023:
7. https://drive.google.com/drive/folders/1s8et0tOndjHS3YnakYatPVxvhk2tuuMC

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ